

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Գ Ի Ր

Անն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիս պիտի վճարէ 400 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 զրշ, դարձեալ 400 թուոց համար, թղթատարութեան ծախքէ ազատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրի ս վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է գրու թիւն պէտք է լւղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրասէր կից Նոր Գրատունը :

Ա. Ձ Գ Ա Յ Ի Ն

Ուրախութեամբ կիմանամք թէ խառնուի մէջ խաղաղութիւնն ու սերը բարոյսին վերահաստատուեր է : Նորընտիր թաղական խորհուրդն սկսեր է վարել իւր պաշտօնը : Վարժապետեան գերապատիւ Տ. Ներսէս եպիսկոպոսը — որ ժամանակէ մ'ի վեր գիւղին քարոզչութեան ու հովուութեան պաշտօնէն դադրած իւր տանը մէջ առանձնացած էր — ժողովրդի գեան կողմանէ եղած հանդիսաւոր հրաւերն ընդունելով, կիւրակէ օրը սկսեր է եկեղեցի իջնել և նոյն օրը խաղաղութեան ու սիրոյ վրայ գեղեցիկ քարոզ մը խօսեր է :

Խառնուի մէջ երկու կողմանէ երևած այս քրիստոնէալոյսել անյիշաչարութեան համար մեր խնդակցութիւնն յայտնէին յետոյ, յարգանքով կիմող բնակիչներ. Վարժապետեանէն որ բարեհաճի ինչպէս Շահնազար Նուպար, նոյնպէս Ներսիսեան վարժարանին վրայէն անպակաս ընել իւր խնամքն ու հոգաստարութիւնը : Ի հարկէ ըստ ըլլալու է թէ խառնուի մեր պատուարժան ազգայնաց մէջ Ներսիսեան վարժարանին ներկայ վի-

ճակին դէմ դժգոհութիւններն սրջափառեցած են :

Յայտնի է որ խառնուի վերջին անցքերը ազգային վերջին անցքերուն մէկ հետեւանքն եղան, և վերջապէս ժողովուրդը կարող եղաւ իր կրաւունքը լսելի ընել առ, և իր սիրած անձերէն նոր թաղական խորհուրդ մը կազմել : Եւ ըստ որում գերապատիւ Ներսէս եպիսկոպոսի անմեղութիւնը ճանչցուիլ սկսուած էր, նորընտիր թաղական խորհուրդը և ժողովրդեան այժմեան համակրութեան ցոյցն՝ առ Նորին սրբաղնութիւնն կը դառնար :

Կլտեմք որ նորընտիր թաղական խորհուրդը մտադիր է գաղութացունել իրենց պաշտօնէն եկեղեցւոյն մէկ քանի պաշտօնեաները, որոնք ազգային վերջին անցից միջոցին յանցաւոր դանուած են : Ներսէս սրբաղնայն է թէ ժողովրդեան առջև պահ մը իւր վարկը կորցաւ, սպառնառն այն է թէ ինք նախորդ խորհուրդը և այն քանի մը պաշտօնեաները կպաշտպանէր : Բայց երբ ժողովուրդը սասուկեց սր Նորին սրբաղնութիւնը մասնակցութիւն չունի անոնց և ոչ իսկ պաշտպա-

նութեան մասին, ինչպէս երևցաւ թաղական խորհրդոյ հրաժարականի խնդրոյն մէջ, դարձաւ իւր նախկին համակրութեան առ Նորին սրբազնութիւնն:

Կյուսամբ որ Ներսէս սրբազանը ուրիշ առթով մ'ալ ընդհանուր աղագին առջև յայտնի կցուցնէ իւր սէրն ու հաւատարիմ ծառայութիւնն առ Հայաստանեայց ուղղափառ եկեղեցին և առ աղգն:

— Եէնիդափուի քարոզիչ Գրիգորիս վարդապետը հանուեր է իւր պաշտօնէն:

Յիշեալ թաղին նորընտիր խորհրդոյն խնդրանօք, ամեն Տեղապահ Հայրը կիւրակէ օրընոյն թաղին եկեղեցին առաւօտ և երեկոյ քարոզիսուեր է:

— Ուրախութեամբ կիմանամք թէ իսկիւտարի Եէնիսահալէի և Գումգափուի Լուսաւորչայ աղջկանց վարժարանները ուսումնասեր տիկիներէ բազկացեալ ինամակալութեանց յանձնուեր են: Այս կազմութիւնը ապացոյց մ'է թէ մօտերս իգական սեռին դատարարակութեան համար անդ անդ նոր ջանքեր սկսած են, և Հայ աիկնայք այս կարևոր պաշտօնին մէջ իրենց արժանաւոր տեղը կբռնեն:

— Մերաստիպէն մարտ 3 նամակէ մը ստացանք հետևեալ տեղեկութիւնը, զոր հրատարակելով Մերաստացոյ ուշադրութիւնը կհրաւիրեմք:

«Ասկէր պէտէլի ըսուած տուրքի վերաբերեալ խնդրոյն նկատմամբ ապակէց յառաջ բաւանիս խօսած ենք. այս օրերս կրկին յիշեալ վէճը նորոգուեր է, որուն պատճառը մէկ քանի

անձինք կհամարուին, որոց պարագլուխ կանուանեն Ահարօն ըսուած անձը, որ ասկէց յառաջ Մերաստիոյ քիչ փնաներ չէ սուեր եղեր:

Մերաստացիք մասնաժողով մը կը կազմեն գրեթէ բոլոր էսնաֆներու վարպետներէն կամ իրենց թաղեցիներէն, որ վերոյիշեալ արոց բաշխումը արդարութեամբ ըլլայ: Այս ժողովը բաւական գործը կարգի դրած է եղեր. ասկայն Մ. Ահարօնը որ իշխան անուամբ կպարծի, մինչև հիմա 60 զուրուշ տուրք ունի եղեր մինչդեռ երկու անձէ բազկացեալ սուկական տուն մ'ալ յիշեալ տուրքը կուտայ, թող որ ինքը իշխան է և 3 անձանց տէր, ինչպէս ինք անանկ ալ իւր եղբայրը որ 3—6 հազար լիւրացի տէր կկարծուի, նա ալ 30 զուրուշ գրել տուած է: Երբ ժողովը այն խարդախութիւնը կտեսնէ կքննէ և կատուգէ և կլծուէ որ ինք անելի կարժէ, սրտմտելով ժողովատեղին դալով իրեն նմաններովը ժողովին կբռն թէ (ձեր բրածը մենք չենք ճանչնար բնաւ երբէք) և ժողովը ցրուելու և գործը ետ ձգելու պատճառ կըլլան: Սակայն ժողովուրդը ասօր վրայ ալ չհամբերելով վսեմ կուսակալին բողոք կուսան և բողոքնին ընդունուելով, արդարադատ կուսակալը կբքննէ գործին ստուգութիւնը և սաստելով կխայտառակէ Ահարօնը՝ ըսելով թէ (եթէ անդամ մ'ալ այս տնակ գործերու մէջ գտնուիս, կ. Պօլիս պիտի գրեմ թէ գրգռիչը և քաղաքը տակն ու վրայ ընողը Ահարօնն է): Ահա այսպէս կվերջանայ և կրկին ժողովոյ օրինաւորութիւնը կհաստատ

ուի և իրաւունք կը տրուի ժողովին ըրածին :

Ահա հասարակութիւնը լաւ հասկըցաւ որ ոչ թէ միայն տէրութեան հարկին համար խեղճ հասարակութիւնը խաբած են այլ և ամէն գործերուն մէջ ալ յօգուտ իրենց կը գործածեն . իփառս մարդկան 50 կամ 150 դահեկան կգրուին Չատկի և Իննգեան իւղադինի նոյնպէս աղքատաց համար բայց միայն եկեղեցին անուննին կկարգացուի, իսկ ըստակը ոչ առող կայ և ոչ առնող . ինչպէս ասոնք՝ անանկ ալ առաջնորդն . ինչու որ իրենք ալ հաշիւ տալ չեն տար կամ ըստ հաճոյից տակի գումարները նոյնքով կատորագրեն և բաժակները կրկին քամելու կնային . ահաւասիկ ասոնց առաջնորդն ուղերու պատճառը որպէս զի կրկին իշխանաց կարգը անցնին և միամիտ ժողովուրդէն պաշտուին : Պետրոս վարդապետն ալ աւելի ասոնք կպաշտպանէ քան թէ խեղճերը . որովհետև եթէ որ որ ըլլայ նոքա ալ իրեն պաշտպան կենան և վերջապէս « առաջնորդական փառքին » արժանայնեն :

Այս օրերս Սեբաստիա կրկին մահսերագրութիւն կըլլայ առաջնորդ ուղերու . հարկ չկոյ ինչ կերպ ըլլալը նկարագրելու . բաւական է որ ուշադրութեան առնուի :

Չմեռնային ցուրտը բաւական ամբուած է և երկրագործութիւնը կը շարունակուի :

Վսեմ . կուսակալը իւր պաշտօնը կատարեալ գործողութիւն համար քաղաքիս շրջակայները անձամբ պտըտեցաւ և սցցելութիւն ըրաւ : Պետրոս վարդապետը շնորհաւորել զնաց ի-

րեններուն հետ , փոխանակ աղբին սիրած ու յարգած անձանց հետ երթալու և ժողովրդոց վշտացած սիրաբշահելու » :

— Ամասիոյ և Մարզուանու առաջնորդ գեր . եգեսեանի նկարագրած Տիվրիկլիեան վարդապետը մայրաքաղաքս գալով Պատրիարքարան գացած է : Սա կըողոքէ եղեր իրեն զէմ ըսուածներուն համար :

ԽԱՌՆ ԼՈՒԻՆԻ

Ներքին գործոց պաշտօնէին Միւթէշար անուանեցաւ մեծ եպարքոսութեան նախորդ մէքթուպի ֆէնան պէյ , պալլայութեան աստիճանաւ :

— Մեծեպարքոսութեան Մէքթուպի կարգեցաւ գանձուց պաշտօնէին նախորդ օղնական Շէֆգաթի էֆէնտի :

— Ներքին գործոց պաշտօնէութեան Մէքթուպի անուանեցաւ կըրետէի նախորդ Մէքթուպի Սաադէֆէնտի , առաջին աստիճանի երկրորդ կարգի պաշտօնատարութեամբ :

— Էտիլնէի կուսակալութեան գործակատար (քափուքէթիլետա) Նուրի էֆէնտիին առաջին աստիճանի առաջին կարգի պաշտօնատարութիւն տրուեցաւ :

— Մէլանիկի կուսակալութեան կեդրոնական նախորդ Միւթէսարըֆ Ծալիգ պէյին յանձնուեցաւ Տիպրէի Միւթէսարըֆութիւնը :

— Շքօտրայի կուսակալութեան կեդրոնական Միւթէսարըֆ անուանեցաւ Տիպրէի նախկին Միւթէսարըֆ ֆեամիլ պէյ :

—Պէյթ—խլ—մայի դանձուն վե-
րատեսուչ Հազգը պէյին առաջին
աստիճանի երկրորդ կարգի պաշտո-
նատարութիւն արուեցաւ :

—Կալէսի իշխանն ու իշխանուհին
չարաթ օրը , ոչ միայն Ս.յա—Սօֆիայի
մզկիթը , այլ և Թօփդափուի պալատը
պարտաւէն յետոյ , զինուորական գոր-
ծոյ պաշտօնատունը դասեր և ցերեկ-
ուան ճաշն հոն քրեր և պաշտօնատան
հրապարակին մէջ եղած զօրահանդէ-
սը տեսնելով , ետ դարձեր են :— Նոյն
իրիկունը կայսերական պալատը ընթ-
րելէն յետոյ՝ որ երէկ ծանուցինք ,
իշխանուհին և դեսպանայ տիկնայք
կայսերական կանանոցը հրաւիրուեր
են թէյ խմելու համար , և մէկ—եր-
կու ժամ կեցեր են հոն , ուր մեծ
պատիւ եղեր է իրենց :

—Գանձուց նորընտիր պաշտօն-
եայն շարժուա վերջը մայրաքաղաքս
կազատուի : Վիէնայէն Սիլիսթրէ ե-
կած բլլալուն լուրը՝ որ մենք ալ հը-
րատարակեցինք լէվրնթէն առնելով ,
սոյցդ չէ : Հեռագրի մը նայելով սա-
կալին երէկ մեկնած ըլլալու է Վիէն-
նայէն :

—Գուլբափուի կազմերը հար-
թեյու աշխատուած տանն , ինչ մը
մայրնարխնէ սինակներ գտնուեր են ,
և հետեւաբար ուրիշ գիւտեր ալ ընե-
լու յուսով խո զարկութիւններ կը-
լան եղեր :

—Ազեկանդրիայէն եկած հեռու-
գիր մը կիսնայնէ թէ՛ դժոխային մե-
քենայ մը գտնուեր է թատրոնը եզիպ-
տոսի Բարձր . իբրտիլին օթեակին
մէջ : Ս.յա պայթոյ մեքենայն օթեա-
կին մէջը դրուած ըլլալով՝ գրանու
հաղորդուած է եղեր կապի խողովա-

կով : Բարձր . իբրտիլը սցս լուրը առ-
նելուն պէս թատրոն չէ մտեր :

—Վաղ երեկոյ Նաումի թատ-
րոնին մէջ արտաքոյ կարգի ներկա-
յայում մը պիտի արուի , որուն հա-
մար արդէն մեծ պատրաստութիւն
ներ տեսնուած են : Գիները խիտ
բարձրացած են . անանկ սր թիկնա-
թուր՝ մէկ օտմանեան ոսկի , և օթ-
եակները 430 ֆրանկի ելեր են :

—Երէկ առտու Բեդերսոյուրի
անդղիական գեսպանը խրամուսնոյն
հետ մայրաքաղաքս հասաւ :

—Փարիզէն լուր կուտան թէ դադ-
ղիական պիւտճէին վրայ վէճ ըլլա-
լով՝ սոյն կառավարութեան ներքին
պաշտօնեայն՝ Պ. Ռուէր ըսեր է թէ
Գազդիայ տէրութիւնը ամէն շանք ը-
րած է և կընէ միշտ խաղաղութիւնը
անվրդ ու պահելու :

—Սպանիական լրագրէ մը կիմա-
նանք թէ ֆսերէսի կողմը ծագած խռո-
վութիւնը բողոքովին հանդարտուեր է :

—Պօսթմաննի պաշլի կողմը որմնա-
դիր մը շէնքի մը վերին գտտիկներ աշ-
խատած ատենը՝ յանկարծ վար կիյ-
նայ խր կեցած տեղէն և սաստիկ կը
վերաւորի : Ան՝ շապէս հիւանդանոց
կտարուի և հոն պէտք եղած դար-
մանը կըլլայ խեղճ գործուորին :

—Կիրակի օրը Անդղիոյ դահա-
ժառանգ իշխանը աչքէ անցուց արե-
ւելեան պատերազմի ժամանակ մեռ-
նող Անդղիայի զինուորականայ գե-
րեզմանը , զոր Պ. Մարօշէթթի շինել
առած է Հարէմ—իսկէլէսի մօտ
ասիական ծովեղերքին վրայ :

ՏՕՈՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. Ա.Լ.Ա.ՃԱ.ՃԻԱՆ

ՏԱՍԳՈՒԹԻՒՆ Ո՛Ր Ե՛Ց ԳԻՐԳՅԱՆՔ